

27847

Հ - 99

ՀՐԱՀԱՆԳ

1928--1929 թվի գՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԿԻ ՑԵՆԹԱԿԱ ՅԵԿԱՄՈՒՏԻ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ



336.21
Հ - 99

1928 Թ.
ՏԵՐԵՊ. Ա. Դ.

14 JUN 2013

27847

17 FEB 2010

336.21

Z-99

Հ Յ Ա Հ Ա Վ Գ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԵՐ

1. 1928-1929թվի գյուղատնտեսական հարկի յենթակա յեկամուտի ազբյուրների հաշվառման ամբողջ պլտականությունը և պատմախանատվությունը դրվում ե գյուղիսորհութեական գործկոմների վրա:

iii) Նախագահ - պառադիսորհրդի նախագահը

բ) անդամներ — գյուղակի ներկայացուցիչը և

գ) զյուղական համայնքից ըբարած մեկ ներկայացուցիչը, վորու պետք և լինի գյուղ-խորհրդի անդամ:

Ծանրություն և Այս գյուղերում, վլրաեզ գյուղ-
խորհուրդներ չկան, նույնպես պետք է կազմվեն
գյուղաշվասու հանձնաժողովներ, վրի նա-
խագահը պետք է լինի այն գյուղաբնարդքի նա-
խագահը, վրին կցված է տվյալ գյուղը, իսկ
անդամները—տվյալ գյուղինի ներկայացու-
ցիք և տվյալ գյուղի խորհրդի լիազորի:

ՀԱՅՈՂԻԳՐԱԿԻ I ՏԱՐԱՆ
ՊԱՏԳԵՐ 3044
ԴԱՒԹ. 781 Բ. ՏԻՐԱԳ 1550.

ԳՐԱՆԵՐ. 781 Բ. ՏԻՐԱԳ 1550.

668

Ա ԱՅ 3
ՏԵՐՎԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

3. Նախ քան հաշվառում սկսելը, գավառակային գործկոմի նախագահը, անդամը կամ ներկայացուցիչը ծանոթացնում ե գյուղացիներին համայնքի ժողովում գյուղհարկի հիմնական սկզբունքների հետ, նրա կիրառման և գյուղհարկի քարտերը կազմելու կարգի հետ։ Միաժամանակ նա նախազգուշացնում ե գյուղացիներին, վոր գյուղհարկի յենթակա յեկամուտի մասին սխալ տեղեկություններ տվողները (ցանքի, անասունների և ուրիշ յեկամուտի աղբյուրների թագցողները) յենթակա յենպատասխանաւովության Քրեական Որենսդրքի 88-րդ հոդվածի համաձայն, վորով նախատեսնաված և ազատազրկում մինչև 6 ամիս ժամանակով կամ տուգանում վարչական կարգով։ Տուգանի գումարը պետք է լինի թագցրած յեկամուտի աղբյուրների վրա ընկնող հարկի տառապատիկ գումարից վոչ ավելի։

4. Յեկամուտի աղբյուրների հաշվառման և հարկման համար սահմանված են գյուղ՝ հարկի քարտեր։ Այդ քարտերը լիովին փոխարինում են անցյալ տրիների գյուղատնտեսական հարկի համար սահմանված գյուղուցակները։

5. Գյուղհաշվառու հանձնաժողովը ստանալով ըստ գյուղի տնտեսությունների քանակի գյուղհարկի քարտեր, ամեն տնտեսության համար յերկու որինակից բազկացած, համաձայն գյուղական ծխամատյանի, համարակարւում ե այդ յերկու որինակն ել միենույն համարի տակ։ Միաժամատյանների համաձայն

4

գյուղհարկի քարտերի համարակարւումն ունի այն նպատակը, վորպեսզի վոչ մի տնտեսություն չվրիպի հաշվառոքից։ Տնտեսության ներթական համարը գրվում է համարիչում իսկ հայտարարում ցույց ե տրվում նույն տնտեսության նախընթաց տարբա գյուղուցակի հերթական համարը։ Ամեն քարտի վերին մասի համապատասխան տողում պետք է գրել գավառակի և գյուղի անունը, հարկատուի ազգանունը, անունը և հայրանունը։

6. Քարտը լրացվում է քիմիական մատիտով և փոխագրող թղթի միջոցով ստացվում է միաժամանակ և յերկրորդ որինակը։

7. Այդ նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հոտո, հաշվառու հանձնաժողովն անցնում է անմիջական հաշվառման աշխատանքներին։

Ա. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱԲՈՒԽԾԻ ՎԱՐՈՒԽՈՒՄԸ

8. Գյուղհարկի քարտերը լրացվում են հարկատուի կամ նրա ընտանիքի անդամի ցուցմունքների հիման վրա համագյուղացիների ներկայությամբ, վորպեսզի հարկ յեղած դեպքում հնարավոր լինի տեղեկությունները ստուգել մյուս գյուղացիների հարցաքննությամբ։

9. Առանձին տնտեսերերի բացակայության գեպքում, նրանց տնտեսության մասին բոլոր տեղեկությունները անպայման մացվում են գյուղհարկի քարտերի մեջ, համաձայն նրա լին-

5

տանիքի անդամների, գյուղհաշվառու հանձնաժողովի և համակառուղացիների ցուցմունքների:

10. Գյուղհարկի քարտերը լրացնելու ժամանակ գյուղացիների ցուցմունքները ստուգվում են հետեւալ նյութերի հիման վրա՝

ա) նախկին տարվա գյուղհարկի ցուցակների,

բ) համագյուղացիների ցուցմունքների;

գ) ամեն տեսակի փաստաթղթերով հիմնավորված տվյալների (վիճակագրական, հողաշխարարական, գավհողբաժինների, հողային մատյանների, գավառակային գործկոմներում և գյուղխորհուրդներում յեղած տվյալների, Պետաղի տպահովագրության ցուցակի):

Դանոթության — Յեթև հաշվառման ժամանակ, Հարցաքննությամբ, տնտեսության կազմի մասին տեղեկությունները չեն պարզվում, գյուղհարկի քարտերը ա) և զ) կետերում նշված տվյալների հիման վրա լրացնելը ժիանգամատիքարգելվում է: Այդպիսի դեպքերում պետք է կատարվի փաստացի ստուգում, իսկ վերոհշշրալ տվյալները ծառայում են միայն վորպես նյութեր ստուգման համար: Հարկման յենթակա յեկամուտի աղբյուրների մասին տեղեկությունների հակառակության կամ զանազան թյուրիմացությունների դեպքերում, նույնպես անողային կատարվում է փաստացի ստուգում:

11. Գյուղհարկի քարտերը կազմվում են բոլոր տնտեսությունների համար, անկախ նրանից հարկվելու յեն նրանք, թե վո՞չ:

12. Այն տնտեսությունների համար, վորոնք չունեն գյուղհարկի յենթակա յեկամուտի աղբյուրներ, նույնպես լրացվում են գյուղհարկի քարտեր:

13. Կապալով վերցրած և տված, կամ կիսրար պայմանով մշակվող հողամասերը հաշվի յեն առնվում և գրվում են կապալով վերցրածը՝ վերցնողի և տվողի տնտեսությունների մեջ, կիսրար պայմանով մշակվածը՝ մշակողի և տրվողի տնտեսությունների մեջ:

Ծանոթություն. — 58-րդ «Ծանոթություն» տողում պետք ե ցույց տրվի՝ թե տնտեսությունն ուժից ե վերցնում, կամ ում և տալիս, կապալով կամ կիսրար, կամ յերկուսը միասին, մատնանշելով՝ գյուղի անունը, տնտեսության №-ը, աղանունը և անունը:

14. Գյուղից գուրս ապրող անձանց կողմից կապալով (կամ կիսրար) վերցրած հողամասերը և նրանց պատկանող անասունները հաշվի յեն առնվում այն գյուղում, վարտեղ գտնվում են հարկի յենթակա յեկամուտի աղբյուրները: Հաշվառման ժամանակ այդպիսի տնտեսությունների համար, գյուղհարկի քարտերի փոխարեն, կազմվում ե առաձին ցուցակ, վորի հիման վրա այն գյուղիորշուրգը, վորտեղ գտնվում են յեկամուտի աղբյուրները,

անհապաղ հայտնում ե բոլոր տեղեկությունները այն գավառակային գործկոմին, վորտեղ բնակվում ե կապարառուն կամ տերը։ Գավառակային գործկոմի ֆինմասը, այդ տեղեկությունների հիման վրա, լրացնում է տվյալ տնտեսության գյուղհարկի քարտերի համապատասխան տողերը ու սյունյակները և ներկայացնում է գավառակային հարկային հանձնաժողովին գյուղի բոլոր քարտերի հետ միասին հաստատելու համար։

15. Գյուղհարկի քարտերում բոլոր թվերը պետք ե գրված լինեն ողարզ, մաքուր, առանց ջնջումների և ուղղումների։ Ամեն տեսակ ուղղումները կատարվում են միմիայն սխալ գրածի վրա գիծ քաշելով և նրա վերեր՝ ուղղումները գրելով։ Այդ մասին գյուղհարկի քարտերի ծանոթության տողում, արգում են համապատասխան նշանակումներ հետեյալ ձեռվ՝ №... առղում + №... սյունյակում (գրել առղի և սյունյակի №) ջնջված և (գրել ջնջվածը) գրված և (գրել ուղղվածը) հավատալ։ Ստորագրություն։

16. Գյուղհարկի քարտերի չլրացած տողերը և սյունյակները բացի «յեկամուտի գումարը» սյունյակներից 35-ից մինչև 38-րդ և 40-ից մինչև 51-րդ սյունյակները՝ գծվում են։

17. Հողի տարածությունը նշանակվում է գեսյատիններով։ Տեղական բոլոր տեսակի հողի չափերը վեր են ածվում գեսյատինների։

Ծանօթությունները պետք ե սույն չրահանգին կցեն տեղական ամեն տեսակի հողի չափերը գեսյատինների վերածած համեմատական տափառի մինչև հարյուրյերորդական մասի ճշտությամբ։

ԿՈՂԵԿՑԻՎ ՅԵՎ ԱՅԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

18. Գյուղատնտեսական միությունների համար (կողեկտիվ տնտեսություններ, արտելներ, ընկերություններ և կոոպերատիվ տնտեսություններ) գյուղհարկի քարտերը կազմում են գավառակային գործկոմների ֆինմասերը, տնհատական տնտեսությունների համար նորիատեսնված ձեռվ։ Ամեն գավառակում այդ միությունների համար կազմած գյուղհարկի քարտերը գասավորվում են առանձին։ Բոլոր այդպիսի տնտեսությունները, անկախ նրանից հարկվում են նրանք, թե վոչ յենթակա յեն հաշվառման։ Այդպիսի տնտեսությունների համար գյուղհարկի քարտերի վերնագրում աղբանուն և անունի փոխարեն գրվում է կողեկտիվի անունը։ Նույն տեղ, այսինքն վերնագրում, բացի ընկերությունների անունից, ցույց ե արգում նույնպես ընկերության մեջ մտնող տնտեսությունների թիվը։

19. Այն տնտեսությունները, վորոնք անգամակցում են գյուղատնտեսական միություններին և ունեն միաժամանակ չնչապատկան հող և յեկամուտի ուրիշ աղբյուրներ՝ չնչերը հաշվի

յեն առնվում յերկու անգամ՝ մեկ անգամ՝ սեփական տնտեսության հաշվառման ժամանակ, իսկ մյուս անգամ գյուղանտեսական միության հաշվառման ժամանակ։ Այդպիսի տնտեսություններին պատկանող անասունները հաշվի յեն առնվում միայն մեկ անգամ՝ նայած թե վորտեղ են գրված այլպիսիները՝ միության թե անհատական տնտեսության մեջ։ Առաջին դեպքում հաշվի յեն առնվում միության մեջ, իսկ յերկրորդ դեպքում անհատական տնտեսության մեջ։

20. Հարկման յենթակա յեկամուտի այն աղբյուրները, վորոնք ողտագործվում են դըպրոցների, մանկական հիմնարկների, գյուղատնտեսական և այլ կազմակերպությունների կողմից՝ հաշվի յեն առնում նույնպես գավառակային գործկոմների Փինմասերը, լրացներավ նմանապես առանձին քարտեր։ Այդ քարտերի վերին մասում անհատական տնտեսությունների ազգանունի և անունի փոխարեն գրվում են կազմակերպությունների կամ հիմնարկների անունները, իսկ 30 և 31-րդ չնչերի տողերը չեն լրացվում։

21. Գավառական նշանակություն ունեցող իրարժգային անտեսությունների յեկամուտի աղբյուրների հաշվառումը կատարում են գավֆինբաժինները։ Տրեստի մեջ մտնող խորհրդային անտեսությունների յեկամուտի աղբյուրների հաշվառումը կատարում են գավֆինբաժինները։

Քաղաքատիպ վայրերում, վորտեղ գյուղատնեսությամբ զբաղվող բնակչության յեկամուտները պետական մյուս հարկերի փոխարեն յենթարկվում են գյուղհարկի՝ (Վաղարշապատ, Ղարաբիլսա, Դիլիջան, Նորբայազետ և Գորիս) հաշվառումը կատարում է Գավֆինբաժինը։

22. Խորհրդային անտեսությունների վարիչները կամ արեսաների ներկայացուցիչները — յեկամուտի աղբյուրների մասին բոլոր աեղեկությունները ներկայացնում են անմիջականորեն համապատասխան Փինմարմիններին։

Դանոթություն. — Սույն հրահանգի 19 20 և 21 հոդվածներում հիշված տնտեսությունները հաշվառվում են անկախ այն հանգամանքից՝ հարկվում են նրանք, թե վոչ։

ԳՅՈՒՂՂԱՐԿԻ ՔԱՐՏԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏՈՂԵՐԸ ՑԵՎ ՍՅՈՒԽԱԿՆԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

23. Գյուղհարկի քարտերի շապիկների յերեսի ներքին մասը «հողի, անտառների և այլ յեկամուտի աղբյուրների նորմաները» լրացվում են հաշվառումը վերջացնելուց հետո, ամեն գյուղի համար սահմանված նորմաների համաձայն՝ գավֆինբաժնում։

24. Հաշվառման ժամանակ լրացվում են միմիայն անտեսության փաստացի կազմին վերաբերող տողերը և ոյունյակները, այսինք

Հետեւյալ տողերը՝ 1-ից մինչև 31-ը ներառյալ
և «ա»-ից մինչև «լ» ներառյալ, 33, 34, 39 և
52-ից մինչև 58 տողերը ներառյալ։ Մյուս տո-
ղերը և «յունյակները» (յեկամուտի գումարնե-
րը, տոկոսային հավելումները, հարկի չափը,
զեղչերը և այլն) լրացվում են հաշվառումից
հետո, գափիլներաժիններում։

2. ԴԱՇՏԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

25. Դաշտամշակության և հատուկ ճյուղե-
րին վերաբերող դյուղարկի քարտերի յերեք
սյունյակները, այն եւ 1. «Հնչապատկան»,
2. «կապալով կամ կիսրար վերցրած» և
3. «կապալվ կամ կիսրար որված» սյունյակ-
ները լրացվում են հետեւյալ ձեռվ՝

ա) առաջին սյունյակում պետք է գրել հա-
մապատասխան տողին վերաբերող, տնտեսու-
թյան չնչապատկան հողի տարածությունը,

բ) յերկրորդ սյունյակում պետք է գրել,
համապատասխան տողին վերաբերող տնտե-
սության կողմից կապալով կամ կիսրար վերց-
րած հողի տարածությունը.

գ) յերրորդ սյունային պետք է գրել,
համապատասխան տողին վերաբերող, տնտե-
սության կողմից կապալով կամ կիսրար որված
հողի տարածությունը։

Ծանոթություն. —Այն գեպքերում յերբ տնտեսու-
թյունը միաժամանակ վերցնում է կիսրար
և կապալով հող—կամ միաժամանակ տալիս է
կիսրար և կապալով հող՝ կապալով վերցրած

հողի տարածությունը պետք է գրել համարի-
չում իսկ կիսրար վերցրած հողի տարածու-
թյունը հայտարարում։ Կապալով տված հողի
տարածությունը պետք է գրել համարիչում
իսկ կիսրար տված հողի տարածությունը հայ-
տարարում։

26. Գյուղհարկի քարտերի առաջին տո-
ղում պետք է գրել տնտեսության ամբողջ հար-
մար ցանված և ցցանված հողի տարածությու-
նը, բացի այն մշակույթներից, վորոնք նշա-
նակված են 8, 9, 10, 11, 12, 13, Գ, 14, Դ, 15,
16 և 17 տողերում։ Վարելահողի տարածու-
թյան մեջ մտնում են նաև խոզանները, ցեղերը,
խամերը, ինչպես նաև տներին կից գանվող,
բացի չենքերով ու բակով չբռնված ագարակա-
յին հողերը։ Ղույլասարի ցանքով բռնված
տարածությունը, իբրև ծխախոտի ցանք չի
հաշվվում և մտնում է վարելահողի տարածու-
թյան մեջ, իսկ 7-րդ տողում զրվում է նաև
ղույլասարը իբրև այլ ցանք։

Ծանոթություն. —Բակ ասելով պետք է հասկանալ
տներին կից այն տարածությունը, վորը բոնը-
ված չե ցանքով կամ տնկարանով։

27. Վարելահողի տարածության մեջ չեն
մտնում։

ա) համայնքի արտատեղերը, վորը շա-
րունակ ծառայում է անասունները արածացնե-
լու համար։

բ) նախընթաց հարկային տարում հարկի յենթակա տարածության մեջ չմտնող անհարմար հողամասերը, վորոնք ներկայում հող ոգտագործողների հաշվով վոռոգվում են, արհետականորեն խոնավացվում են: Այդ հողամասերը չեն հարկվում և հաշվի չեն առնվազմ վոռոգման աշխատանքները վերջանալուց հետո, յերեք տարվա ընթացքում:

«բ» կետի հիման վրա հաշվի չեն առնվազմ այն հողամասերը, վորոնց վրա կատարվել է կատարվում են հետևյալ մելիորատիվ և կուտուր-տեխնիքական աշխատանքները՝

1) Յեթե այդ հողերը վոռոգելու և հետագայում կուլտուր-աեխինիքական, գլուզատնտեսական կարիքների համար ոգտագործելու նրապատճիկ, հատուկ մեքենաների կահավորությամբ, ջուր և բարձրացվում, պատճեները են կառուցվում ջուրը հավաքելու համար և չինվում են առանձին լճակներ ջրերի համար:

2) Յեթե կառուցվում են հատուկ պատճեններ և թումբեր հեղեղումների առաջն առնելու համար, այն հողերի նկատմամբ, վորոնց մինչև այդ աշխատանքները, չեղեղումների պատճառով, անհնարին եր ոգտագործել իրեն վորելահող կամ խոտհարք:

3) Ճահիճների և ճահճացած վարելահողի ու մարդագետինների չորացնելը և կուրտուրապես մշակելը հատուկ առուների ցանցի և դրբենութիւն (քենաչ) միջոցով:

4) Հողը խոնավացնելու նպատակով անտառային ոռունքներ չինելը.

դ) հատած անտառների այն տարածությունները, վորոնց վրա նախընթաց հարկային տարում կատարվել են կոճղահանական աշխատանքներ, այդ հողամասերը ցանքի կամ խոտհարքի համար պիտանի դարձնելու նպատակով:

դ) խճուղու լանջերի վրայի ցանքերը, վորը կատարում և լիճուղային վարչությունը՝ ինձուղու թեքվածքներն ամրացնելու նպատակով:

«բ» կետում հիշատակված տարածությունները չեն մտնում հաշվառման ավյալների մեջ միայն այն գեպքում, յերբ հարկատուն ներկայացնում է գավառական հողաբաժններից վկայական, ուր պետք է նշված լինի՝

ա) ինչպիսի մելիորատիվ աշխատանքներ են կատարված.

բ) մելիորացիայի յենթարկված հողամասերի տարածությունները.

դ) յե՞րբ և ո՞ւմ հաշվին են կատարված այդ աշխատանքները:

28. Հաշվի չեն առնվում նաև այն լրացուցիչ հողաբաժնները, վորոնք արգում են գյուղական տնտեսություններին մանկատների առներին գյուղատնտեսական աշխատանքներին պատրաստելու համար, այդ հողաբաժնները տալուց հետո Յ տարվա ընթացքում:

Այդ կետում նշանակված հողաբաժինները չեն մտնում վարելահողի տարածության մեջ՝ միմիայն այն գեպօւմ, յերբ հողային գըքում նշանակված է, վոր հողաբաժինը տրված է մանկատան սանին:

29. Գյուղհարկի քարտերի յերկրորդ տողում պետք է գրել ջրովի ցանքերի տարածությունը, բացի հատուկ մշակույթներից, վորոնք նշանակված են 8-րդ տողից մինչև 17-րդ տողը ներառյալ (այսինքն նշանակվում են աշխատավայրեր, յուղաբեր բույսեր, զույլասար և այլն):

30. 3-րդ տողում պետք է գրել անջրդի ցանքերի տարածությունը, բացի հատուկ մըշակույթներից, վորոնք նշանակված են 8-րդ տողից մինչև 17-րդ տողը ներառյալ (աշխատավայրեր և գարնանացան հացահատիկներ, յուղաբեր բույսեր, զույլասար և այլն):

31. 4-րդ տողում պետք է գրել 2-րդ և 3-րդ տողերի գումարները, բացի կենաֆի և գերչափակի ցանքով բոնված տարածությունից:

Որինակ՝ Հայրապետյանի տնտեսությունն ունի ջրովի ցանք 4 դես. և անջրդի ցանք 2 դես., վորից 1 դես. կենաֆի ցանք եւ 1 դես. գերչափի ցանք: Ջրովի տողում գրվում է 4 դես. և անջրդի տողում 2 դես. «Ընդամենը» տողում պետք է գրել միայն 4 դես., այսինքն ընդհանուր ցանքի տարածությունից հանվում է կենաֆի և գերչափի ցանքով բոնված տարածու-

թյունները և 4-րդ տողում պետք է գրել միայն մեացածը—այն եւ՝ 4 դես.:

32. 5-րդ տողում պետք է գրել աշխատացան և գարնանացան ցորենի ցանքով բոնված տարածությունը ընդհանուր թվով:

33. 6-րդ տողում պետք է գրել աշխատացան և գարնանացան ցարու ցանքով բոնված տարածությունը, ընդհանուր թվով:

34. «ա» տողում պետք է գրել կենաֆի ցանքով բոնված տարածությունը:

35. «բ» տողում պետք է գրել քունջութիւն, կտավհատի և գերչափի ցանքերով բոնված տարածությունը, ըստ վորում գերչափի ցանքով բոնված տարածությունը ցույց ե տրվում նույն տողում առանձին հայտարարով, վորը համարիչի մեջ չի մտնում:

36. 7-րդ տողում պետք է գրել այլ ցանքերով բոնված տարածությունը, վորոնք չեն մտնում 5, 6 «ա» և «բ» տողերը (ինչպես որինուկ յեգիպտացորեն, զոյլասար, կորեկ, հոձար և ուրիշները):

ԳՅՈՒՂԱՑՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՃՅՈՒՂԵՐ

37. 8-րդ տողում պետք է գրել բամբակի ցանքով բոնված տարածությունը:

38. 9-րդ տողում պետք է գրել չալթուկի ցանքով բոնված տարածությունը:

39. 10-րդ տողում պետք է գրել ծխախոտի ցանքով բռնված տարածությունը, բացի դույլասարից, վորր մանում և վարելոհողի և «այլ» ցանքերի մեջ (1 և 7 տողեր) :

40. 11-րդ տողում պետք է գրել կարսոփիլի ցանքով բռնված տարածությունը:

41. 12-րդ տողում պետք է գրել բանջարանցների և պահեղների տարածությունը:

42. 13-րդ տողում պետք է գրել հարկի յենթակա խաղողի այգիների տարածությունը, այսինքն՝ այն խաղողի այգիների տարածությունը, վորոնցից անցյալ տարի (27 թվին) բերք և ստացվել:

Ծանրություն.—Այն խաղողի այգիները, վորոնք պատվասակում են Փելոքսերիայից չփախեցող արմատների վրա (ամերիկական վազեր), հաշվի չեն առնվազմ 7 տարվա ընթացքում, նըրանց պատվասակներուց հետո:

43. «Պ» տողում պետք է գրել խաղողի այգիների տարածությունը բերքավագության առաջին տարուց սկսած, այսինքն այն այգիները, վորոնք 28 թվից սկսած բերք են տալու:

44. 14-րդ տողում պետք է գրել հարկի յենթակա պաղատառ այգիների և պաղատառ թփերի տարածությունը, (այսինքն այն պրոցատու այգիների և պաղատառ թփերի տարածությունը, վորոնցից անցյալ տարի, 27 թվին, բերք և ստացվել):

45. «Դ» տողում պետք է գրել պաղատառ այգիների և պաղատառ թփերի տարածությունը, պաղատառ թփերի առաջին տարուց սկսած, այսինքն այն տարածությունները, վորոնք 28 թվին բերք են տալու:

46. 15-րդ տողում պետք է գրել թթենու տնկարանները:

Ծանրություն.—1. Այն գեղքերում յերբ խաղողի, պաղատառ այգիների կամ թթենու տնկարանների տարածության խոչը մասը ոգաազործում և խոտհարքի, կամ այլ մշակույթի համար, այդ տարածությունը պետք է հաշվել իրուհի ցանք կամ մշակույթ:

Ծանրություն.—2. Պաղատառ այգիների, պաղատառ թփերի, թթենու տնկարանների, բանջարանցների և պահեղների, կարասֆիլի և ցանքի խոտհարքույթի համար հատկացված տողերում՝ համարիչավ ցույց և արգում այլ մշակույթների ընդհանուր տարածությունը, իսկ հայտարարով՝ վրանցից միայն անջրդի տարածությունը:

47. 16-րդ տողում պետք է գրել թե ջրովի և թե անջրդի խոտհարքների տարածությունը, բացի արհեստական խոտհարքներից:

48. 17-րդ տողում պետք է գրել արհեստական խոտհարքույթի տարածությունը:

Ծանրություն.—Առվույտի ցանքով բռնված տարածությունը վորը մանում և բամբակի ցան-

քաշը պահառության մեջ, ցանկը ու առաջին տար-
րեն—Հաշվի չե առնվաւմ:

49. 18-րդ տողում պետք է գրել չերամա-
պահության մասին տեղեկություններ, այն և
ա) առաջին մասում, վորտեղ գրված և
անունը, գրվում է «Չերամապահություն».

բ) յերկրորդ մասում պետք է գրել ստա-
ցած բոժոժի քանակը վիթերով և ֆունտերով:

4. ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

50. «Յե» տողում պետք է գրել 1 տարե-
կանից մինչև 1 տարեկան և 7 ամսական հասակ
ունեցող յերիտասարդ խոշոր յեղյուրավոր
անասունները (այսինքն 1926 թ. հոկտեմբերից
մինչև 1927 թ. մայիսի ծնվածները):

51. «զ» տողում պետք է գրել 1 և կես տա-
րեկան և բարձր հասակ ունեցող խոշոր յեղ-
յուրավոր անասունների քանակը (այսինքն
մինչև 1926 թ. հոկտեմբեր ամսավա ծնվածները)
բացի յեղներից, գոմեցներից և մատակներից:

52. 19-րդ տողում պետք է գրել «զ» տո-
ղում գրված անասունների քանակից՝ յերինջ-
ները և բուղաները 3 տարեկանից բարձր հա-
սակով—(այսինքն՝ 1925 թ. մայիս ամսից ա-
ռաջ ծնվածները) և կոփերը առաջին ծնից
3 տարեկան հասակը:

53. «ե» տողում պետք է գրել 1 և կես տա-
րեկան և բարձր հասակ ունեցող յեղները (այ-

սինքն մինչև 1926 թ. հոկտեմբեր ամսավա ծրն-
վածները):

54. 20-րդ տողում պետք է գրել «ե» տո-
ղում գրված անասունների քանակից յեղները
4 տարեկանից բարձր հասակով (այսինքն 1924
թ. մայիս ամսից առաջ ծնվածները):

55. «ը» տողում պետք է գրել 1 և կես տա-
րեկան և բարձր հասակ ունեցող գոմեցները
(այսինքն մինչև 1926 թ. հոկտեմբեր ամսավա ա-
ռաջ ծնվածները):

56. 21-րդ տողում պետք է գրել «ը» տո-
ղում գրված անասունների քանակից գոմեց-
ները 4 տարեկանից բարձր հասակով (այսինքն
1924 թ. մայիս ամսից առաջ ծնվածները):

57. «թ» տողում պետք է գրել 1 և կես տա-
րեկան և բարձր հասակ ունեցող մատակները
(այսինքն մինչև 1926 թ. հոկտեմբեր ամսավա
ծնվածները):

58. 22-րդ տողում պետք է գրել «թ» տողում
գրված անասունների քանակից յերինջները և
գոմշարուղաները 3 տարեկանից բարձր հաս-
ակով (այսինքն՝ 1925 թ. մայիս ամսից առաջ
ծնվածները) և մատակները առաջին ծնից
հետո:

59. «ժ» տողում պետք է գրել 2 տարեկան
և բարձր հասակ ունեցող ձիերը և ջորիները
(այսինքն՝ մինչև 1926 թ. մայիս ամսավա ծրն-
վածները):

60. 23-րդ տողում պետք է զրել «ժ» տողում գրված անասունների քանակից ձիերը և ջորիները 4 տարեկանից բարձր հասակով (այսինքն՝ 1924 թ. մայիս ամսից առաջ ծնվածները) :

61. «ի» տողում պետք է զրել 2 տարեկան և բարձր հասակ ունեցող ուղղերը (այսինքն՝ մինչև 1926 թ. մայիս ամսից ծնվածները) :

62. 24-րդ տողում պետք է զրել «ի» տողում գրված անասունների քանակից ուղղերը 4 տարեկանից բարձր հասակով (այսինքն՝ 1924 թ. մայիս ամսից առաջ ծնվածները) :

63. «լ» տողում պետք է զրել 2 տարեկան և բարձր հասակ ունեցող եշերը (այսինքն՝ 1926 թ. մայիս ամսից առաջ ծնվածները) :

64. 25-րդ տողում պետք է զրել «լ» տողում գրված անասունների քանակից եշերը 4 տարեկանից բարձր հասակով (այսինքն՝ 1924 թ. մայիս ամսից առաջ ծնվածները) :

65. 26-րդ տողում պետք է զրել ձմեռն անցկացրած վոչխարների և այծերի քանակիր:

66. 27-րդ տողում պետք է զրել 6 ամսականից բարձր հասակ ունեցող խողերի քանակիր:

Ծանրքություն.—Անասունների հասակը վորոշում և առ 1-ի մայիսի 1928 թ.:

67. 28-րդ տողում պետք է զրել չըջանակուր փեթակների քանակիր:

68. 29-րդ տողում պետք է զրել քթոցաձև փեթակների քանակիր:

5. Շնչերին

69. 30-րդ տողում պետք է զրել անտեսության մեջ յիշած շնչերի թվով: Շնչերի թվի մեջ մանում են՝

ա) բոլոր անձինք, անկախ հասակից, վորոնք սաացել են հոգաբաժին ավյալ անտեսության մեջ և կազմված են այդ անտեսության հետ: Տնտեսության այն անդամները, վորոնք դյուզից հետանում են ժամանակավոր վատակների համար, շնչերի բնդհանուր թվից չպետք և հանվեն, յեթե նրանց հատկացված է հողբաժին:

բ) Հող չստացողներից շնչերի բնդհանուր թվի մեջ են մանում նոր ծնվածները և նրանք, վորոնք մտել են ընտանիքի մեջ հոգաբաժանությունից հետո առաջ յեկած ընտանեկան նոր կազմակցության համաձայն (ամուսնություն), այն դեպքում, յեթե նրանք չարունակ ապրում են անտեսության մեջ: Վերջինների չարքում պետք է դասվեն և անփեսաները:

շ) Տնտեսության մեջ մշտապես ընակվող բնտանիքի անդամներից շնչերի բնդհանուր թվի մեջ մանում են և հաշվի առնվում՝

1) Զինվորական շարքային և հրամանատարական կազմի ծառայողները (հրամանատարական, վարչական, քաղաքական, բժշկական և անասնաբուժական), վորոնք գտնվում են Բ.Գ.Կ.Բ. կազմային կազմի մշտական ծառա-

յության մեջ, նաև Պետական Քաղաքական
Վարչության գործառակերի և պահակախմբերի
մեջ:

2) Հրամանատարական կազմին պատկանող
անձինք, վորոնք գտնվում են յերկրային մտակե-
րի փոփոխական կազմի, մինչ ժամկետային
արձակությի մեջ ԲԳԿ Բանակում, վորոնք
կանչված են վորպես Հրահանդիչներ մինչ-զո-
րակոչային կամ արտապորային պատրաստումի
դասընթացներն անցկացնելու համար։
Կադրային կազմի մշտական ծառայությունից
ազատված, յերկարատե արձակությ ստացած,

3) 1928 թ. Մարտի 1-ից հետո Բ.Գ.Կ.Բ.
պահեստում թողած կոմ բոլորովին ազատվա-
ծները։

4) Պատերազմի հաշմագոմները և աշ-
խատանքի այն հաշմանդամները, վորոնք մրա-
նում են հաշմանդամության 1, 2 և 3-րդ խրմ-
բերի մեջ և չունեն վոչ աշխատավորական յե-
կամուտ։

5) Բանֆակների, կոմմունիտատիան հա-
մալսարանների, խորհրդային կուսակցական
դպրոցների և ուրիշ բարձրագույն կրթական
հիմնարկությունների ունկնդիրները, նաև բո-
լոր մյուս դպրոցների աշակերտները։

6) Սույն Հրահանգի 69-րդ հոդվածի «զ»
կետում հիշված անձինք հաշվի յեն առնվում
անտեսության շնչերի թվում միայն այն դեպ-
քում, յեթ նրանց ընտանիքների կողմից
ներկայացվում են պատշաճ վկայականներ։

ա) զինվորական ծառայողների համար՝
նրանց ծառայության տեղից (զինվորական մա-
սից կամ հիմնարկությունից)։

բ) պահեստից իրեն հրահանդիչներ կոչ-
վածների համար՝ համապատասխան յերկրա-
յին վարչությունից։

գ) զինվորական ծառայությունից ազատ-
վածների համար՝ գավառական զինվորական
կոմիսարիատից։

դ) հաշմանդամների համար՝ Սոցապի գա-
վառական բաժններից և

յե) ուսանողների և աշակերտների համար
համապատասխան դպրոցներից։

70. Շնչերի թվում չեն հաշվվում՝

ա) նոր ընտանեկան կապակցությամբ
(ամուսնության պատճառով) ուրիշ անտեսու-
թյուններ գնացած անձինք, նույնպես մեռած-
ները և անհայտ կորածները, յեթե նույնիսկ
անտեսության մեջ մնացել են նրանց հատկաց-
րած հողաբաժնները։

բ) ընտանիքի այն անդամները, վորոնք
միանդամայն կտրել են իրենց կապը զյուղա-
տնտեսության հետ հողաբաժանությունից հե-
տո, յեթե նույնիսկ նրանց համար ևս անտեսու-
թյանը հատկացվել է հողբաժին։

գ) ընտանիքի չափահաս (18 տարեկանից
բարձր) այն անդամները, վորոնք ապրում են
անտեսությունից գուրս և իրենց աշխատավար-
ձից չեն ուղարկում անտեսությանը։

դ) տնտեսության մեջ ծառայող բատրակները և վարձու բանվորները.

ե) ազատազրկման տներում գտնվող այն կալանավորները, վորոնք գատապարտված են մեկ տարուց ավելի ժամանակով:

71. 31-րդ տողում պետք է գրել տնտեսության մեջ յեղած աշխատունակ ազամարդկանց և կանանց քանակը, ըստ վորում կարմիր բանկայինների և աշխատանքի ու պատերազմի հաշմագամների անահետթյունների մեջ համարիչում ցույց ե արգում աշխատունակ կանանց թիվը իսկ հայտաբարում աշխատունակ ազամարդկանց թիվը; Իրենք կարմիր բանակոյնները և հաշմանդամները աշխատունակների թվում չեն գրվում:

Ծանոթություն 1.—Աշխատունակ են համարվում աղամարդեկ 18-ից մինչև 55 տարեկան հասակը և կանայք 18-ից մինչև 50 տարեկան հասակը:

Ծանոթություն 2.—Ժամանակավոր անաշխատանկությունը (սրբնակ հիմանդրություն, հղիություն) հաշվի չի առնվազում: Բացահայտ հաշմանդամները, յեթե նույնիսկ հաշմանդամության մասին պատշաճ վկայականներ չներկայացնեն, աշխատունակ չեն համարվում:

6. ՎՈԶ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԲԱՂՄՈՒՔՆԵՐ

72. 33-րդ սյունյակում պետք է գրել տըստեսության մեջ դոյլություն ունեցող վոչ գյու-

դատնտեսական զբաղմունքների անունները, որինակ՝ Հյուսն, պայտառ, դարբին, կոչկակար, ծառայող, փոխագրական միջոց, դրով վաստանկներ, աղաց, գյուղատնտեսական մեքենայից կապարավարձ, կտպալով արգած հողի կապարավարձ, կիսովի պայմանով վերցրած անապունքները, վարձով արգած չենքերի և այլն:

73. Դանոքություն.—52 տողում նշանակվում է արհեստավորների, անայնագործների, արհեստագործների և կիսաարհեստագործների ձեռնարկություններում զբաղված բանվորների թիվը:

73. Արհեստավորների և անայնագործների թվում հաշվի յեն առնվազ նրանք, վորոնք զբաղվում են արհեստներով կամ անայնագործությամբ միայնակ կամ 3-ից վոչ ավելի վարձու բանվորների ողնությամբ, անկախ այն հանգամանքից թե ունեն հատուկ կահագործած արդարացներ կամ մեքենայական շարժիչներ թե վոչ:

Հիշված արհեստավորների յեկամուսները հաշվի յեն առնվազ այն դեպքում, յեթե նըրանք միաժամանակ զբաղվում են գյուղատնտեսությամբ:

Ծանոթություն.—1. 2 աշակերտը վարձու բանվոր չի հաշվվում, 3 և 4 հաշվվում են մեկ վարձու բանվոր, 5 և 6—հաշվվում են 2 վարձու բանվորներ, 7 և 8—հաշվվում են 3 վարձու բանվորներ:

Դանիքուրյուն. — 2. Մարդկային ուժով գործող ժեքենաներն և շարժիչները — մեքենայական շարժիչներ չեն հաշվվում:

Ծանոթություն. — 3. Վոչ գյուղատնտեսական զբաղմունքներից և աշխատավարձից ստացված յեկամուտի գումարները վորոշելու ժամանակ հաշվի յեւ առնվում 1927 թ. մայիսի 1-ից մինչև 1928 թ. մայիսի 1-ը ստացած յեկամուտը:

74. Հաշվի չեն առնվում և պատշաճ գեղքերում յենթակա յեն հարկման պետական արհեստագործական և յեկամուտային հարկերով՝

1) Առետուրը,

2) Արհեստագործական այն ձեռնարկությունները, փորոնց վարձու բանվորների թիվը յերեքից ավելի յեւ.

3) Մասնավոր անձանց պատկանող ապրանքային բնույթ կրող աղացներ:

Ծանոթություն. — «3» կետում հիշված ապրանքային բնույթ կրող աղացներին պատկանում են մասնավոր այն աղացները, վորոնք բացառապես կամ մասնակի պարապում են մասնավոր անձանց կողմից գնած, կամ աղացի տիրոջ կողմից մթերած հացահատիկներն աղալով և իբրև ալյուր վաճառելով բացի՝ ա) քամու աղացներից, անկախ նրանից, թե քանի քար ունի և թէ մեկ և յերկու քար ունեցող ջրային և մեքենայական շարժիչներով աղացները:

75. Գյուղական վայրերում գտնվող համատիրական (մի քանի տիրոջ պատկանող) այն

արհեստագործական ձեռնարկությունները, վորոնց բանվորների ընդհանուր թիվը 4 հոգուց ավելի չե, հաշվելով նույն թվում և իրենց համատերերին, յենթակա յեն գյուղհարկի, արհեստագործական և յեկամուտային հարկերի հետևյալ կարգով՝

Համատերերից նրանք, վորոնք զբաղվում են գյուղատնտեսությամբ, յենթակա յեն գյուղհարկի և հետևապես այդ ձեռնարկությունից ստացած յեկամուտը հաշվի յեւ առնվորվում տվյալ համատերով տնտեսության մեջ այն չափով, վոր չափով վոր նրան բաժին և ընկնում։ Իսկ համատերերից նրանք, վորոնք, գյուղատնտեսությամբ չեն զբաղվում, յենթակա յեն արհեստագործական և յեկամուտային հարկի և նրանց բաժին յեկամուտը գյուղհարկի հաշվառման ժամանակ հաշվի չի առնվորվում։

76. 34-րդ սյունյակում համարիչում պետք է գրել տնտեսության վոչ գյուղատնտեսական զբաղմուքներից ստացած յեկամուտի ամբողջ գումարը առանց վորեւ և ծախս հանելու։ Վոչ գյուղատնտեսական զբաղմունք ունեցողների ընդհանուր յեկամուտը համարվում է՝ 1. նրանց ձեռնարկություններում պատրաստված և

77. Ընդհանուր յեկամուտ ասելով, պետք է հասկանալ վոչ գյուղատնտեսական զբաղմուքներից ստացած յեկամուտի ամբողջ գումարը առանց վորեւ և ծախս հանելու։ Վոչ գյուղատնտեսական զբաղմունք ունեցողների ընդհանուր յեկամուտը համարվում է՝ 1. նրանց ձեռնարկություններում պատրաստված և

ուելիզացիայի յենթարկված նյութերի և ապ-
րանքների արժեքը, բատ վորում հաշվի պետք է
տոնվեն կանխիկ ստացված և ապառիկ մնացած
գումարները, 2. նրանց ձեռնարկության մեջ
կատարված աշխատանքի համար ստացված
գումարները (ջրաղացներում, դինգերում և
այլ նման ձեռնարկություններում կամ արհես-
տանոցներում կատարած գործի համար ստաց-
վող վարձատրությունը, դրամով կամ մթեր-
քով):

78. Գյուղհաշվառու հանձնաժողովը վոչ
գյուղատնտեսական յեկամուտների ընդհանուր
գումարը վորոշելուց հետո, վորոշում և ամեն
տեսակի վոչ գյուղատնտեսական զբաղմունքի
համար կատարած ծախսերը, բացի աշ-
խատավարձից: Ծախսերի ընդհանուր գումարը
պետք է գրել նույն 34-րդ սյունյակում հայ-
տարարով:

79. Ծախսերի մեջ ընդունվում են՝ հում
նյութերի, կիսաֆարերիկատների, վառելիքի
արժեքն ու վարձու բանվորներին արված վար-
ձատրությունը:

80. Այլպիսով 34-րդ սյունյակում ամեն
տեսակի վոչ գյուղատնտեսական զբաղմունքի
նկատմամբ, բացառությամբ միայն աշխատա-
վարձի, համարիչում պետք է գրել ընդհանուր
յեկամուտը, իսկ հայտարարում՝ ընդհանուր
ծախսը:

81. Գյուղհարկի քարտերի նույն 34-րդ
սյունյակում մատնանշվում է նաև ընտանիքի

անդամ, բանվոր և ծառայողների աշխատա-
վարձը, անկախ նրանից՝ ապրում երանվոր կամ
ծառայողը տնտեսության մեջ, թե տնտեսու-
թյունից գուրս, յեթե միայն վերջինը կապված
է տնտեսության հետ և իր աշխատավարձից ու-
ղարկում է տուն:

№ 58-րդ «ծանոթության» տողում ցույց
է տրվում աշխատողի ծառայության վայրը
(գյուղի կամ քաղաքի անունը):

Ծանոթություններից գուրս ապ-
րող բանվարների և ծառայողների աշխատա-
վարձը, ինչպես նաև տնտեսության մեջ ապ-
րողներինը, հաշվի յե առնվում լրիվ չափով,
առանց գուրս գալու ծախսերը:

82. Հաշվի չպետք է առնվեն աշխատավար-
ձի հետեւյալ տեսակները՝

ա) պարհակային կարգով աշխատանքների
համար ստացված աշխատավարձը.

բ) գյուղական տնտեսության մեջ աշխա-
տող բատրակների աշխատավարձը.

գ) խորհրդային ընտրովի պաշտոններում
աշխատողների աշխատավարձը (գավառային
գործադիր կոմիտեների ու գյողիորհրդի ան-
դամների).

դ) գյուղական փոխագարձ ողնության
կոմիտեներում ընտրովի պաշտոններում աշխա-
տողների աշխատավարձը.

յե) գյուղական սոորին ցանցի կոոպերա-
տիվների ընտրովի պաշտոններում ծառայող-
ների աշխատավարձը.

զ) ըրջանային և գյուղական բժշկական և
անասնաբուժական ծառայողների աշխատա-
վարձը (բժիշկների, աստմնաբուժների, ման-
կաբարձուհիների և այլն) .

ը) գավառակային գյուղատնտեսների, նր-
անց սպականների, ըրջանային հողաբաժան-
ների և մելիորատորների, անտառապետների,
նրանց ոգնականների, անտառապահների, գյու-
ղական ուսուցիչների, ժողգատավորների,
գյուղխորհուրդների քարտուղարների, գյու-
ղական փոստատարների, գյուղական միլիցիա-
յի, ըրջանային վիճակագիրների, գյուղական
հիմնադանոցների և դպրոցների տեխնիքական
աշխատակիցների, գրական և կուլտուր-լուսա-
վորական աշխատակիցների (գյուղթղթակիցնե-
րի, խրճիթ-քննթերցարանների վարիչների և
այլն) .

թ) զինվորական ծառայողների ամեն տե-
սակի մատակարարումները .

ժ) պետական հաստատություններից
ստացվող կենսաթոշչկները :

83. Յյուրաքանչյուր անտեսության վոչ
գյուղատնտեսական զբաղմունքներից ստաց-
ված յեկամուտները վորոշվում են հաշվառման
ժամանակ գյուղում և վերջնականապես հաս-
տառվում են գավառակային հարկային հանձ-
նաժողովի կողմից :

84. Այն քաղաքներում, վորտեղ գյուղա-
տնտեսությամբ զբաղվող բնակչության յեկա-

մուտները յենթարկվում են գյուղհարկի պե-
տական մյուս հարկերի փոխարեն (Վաղարշա-
պատ, Ղարաքիլիսա, Դիլիջան, Նոր-Բայազեղետ,
Գորիս) հաշվի պետք ե առնվեն գյուղհարկի
յենթակա բնակչության այն բոլոր վոչ գյուղա-
տնտեսական վաստակները, վորոնք հիշատակ-
ված են սույն հրահանգում :

85. 35-րդ սյունյակում պետք ե գրել գա-
վառակային հարկհանձնաժողովի կողմից հաս-
տատված արհեստագործական և տնայնազոր-
ծական զբաղմունքներից ստացած յեկամուտի
գումարը : Այդ գումարը հաստատելուց առաջ
ընդհանուր յեկամուտի գումարից (34 սյուն-
յակհամարիչ) պետք ե նախապես հանվի ծախ-
սի գումարը (34 սյունյակհայտարար) :

86. 36-րդ սյունյակում պետք ե գրել գա-
վառակային հարկհանձնաժողովի կողմից հաս-
տատված՝ արհեստագործական և տնայնազոր-
ծական զբաղմունքներից ստացած յեկամուտի
գումարը : Այդ գումարը հաստատելուց առաջ
ընդհանուր յեկամուտի գումարից (34 սյունյակ-
համարիչ) պետք ե նախապես հանվի ծախ-
սի գումարը (34 սյունյակհայտարար) :

87. 37-րդ սյունյակում պետք ե գրել գա-
վառակային հարկհանձնաժողովի կողմից հաս-
տատված այլ վոչ գյուղատնտեսական զբաղ-
մունքներից ստացած յեկամուտի գումարը,
նախապես հանելով ծախսերը (34 սյունյակի-
հայտարար) :

7. ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԵՐ

88. 52-րդ տողում պետք ե գրել՝ ունի^o որ-
դյոզ տնտեսությունը մշտական կամ սեզոնային
բանվորներ : Մշտական բանվորներ ունենալու

պեղքում, պետք և գրել բանվորների թիվը և
թվի մոտին գրել «մշտ.»: Իսկ սեզոնային
բանվորներ ունենալու գեղքում, պետք և գրել
բանվորական որերի թիվը և թվի մոտին գրել
«որ.»:

Որինակ՝ 1. Պետրոսյանն ունի յերեք մշտա-
կան բանվոր 52-րդ սյունյակում պետք և գրել
«3 մշտ.»:

2) Սիմոնյանի տնտեսության մեջ սեզոնով
աշխատել են 5 բանվոր 8 որվա ընթացքում—52-
րդ տողում գրվում է «40 որ.» ($5 \cdot 8 = 40$):

3) Դանելյանի տնտեսությունն ունի 2 մըշ-
տական բանվոր և սեզոնով այդ տնտեսության
մեջ աշխատել են 6 բանվոր 6 որվա ընթացքում:
52-րդ տողում նշանակվում է «2 մշտ.» և «36
որ.»:

89. 53-րդ տողում պետք և գրել՝ տալիս՝
արդյոք տնտեսությունը հողը կապալով կամ
կիսրար, բատ վորում նշանակվում է ձեր՝ կտ-
պալ, կիսրար կամ յերկուսը միասին:

90. 54-րդ տողում պետք և գրել՝ վերջնո՞ւմ
և արդյոք տնտեսությունը հող կապալով կամ
կիսրար, բատ վորում նշանակվում է ձեր (կիս-
րար, կապալ, կամ յերկուսն ել միասին):

91. 55-րդ տողում նշանակվում է՝ ծառա-
յում՝ արդյոք տնտեսության վորեւ մի տն-
դամ իբրև բատրակ ուրիշների մոտ թե վոչ,
այսինքն պետք և գրել «այո» կամ «կոչ»:

92. 56-րդ տողում պետք և գրել հասարակ
գյուղատնտեսական մեքենաների անունները և
քանակը, այն է՝ գութան, չութ, բգատու, ամեն
տեսակի մանգյառներ (ցաքաններ), սայլ, տա-
փան, ջաջառ, կամ մեկ և յերկու շարքանի
սերմացաններ և այլն:

93. 57-րդ տողում պետք և գրել գյուղատն-
տեսական բարդ մեքենաների անունները և քա-
նակը, այն է՝ տրակառ, քամհար, չնձող մեքե-
նա, կալող մեքենա, սերզատ (սեպարատոր),
ամեն տեսակի հատկադրիչ մեքենաներ և խրս-
ճակապներ:

Ծանոթություն. — Մեկ և յերկու շարքանի սերմա-
ցան մեքենաներ գյուղատնտեսական բարդ մե-
քենաներ չեն հաշվվում:

58-րդ ծանոթության տողում պետք և գրել՝

ա) ումից և վերցնում կամ ում և տալիս
հող տնտեսություը կապալով, կամ կիսրար,
կամ յերկուսը միասին, մատնանշելով՝ գյուղի
տնունը, տնտեսության №-ը, տղթանունը և տ-
նունը:

բ) սիսլիների գեղքում 15-րդ հոգվածում
մատնանշված ուղղումների ձևը:

գ) աշխատավարձ ունեցողի ծառայության
վայրը (գյուղի կամ քաղաքի տնունը):

դ) կարմիր բանակայինների և հաշման-
գամների վկայականների №, թիվը և ամսո-
թիվը.

յե) ունի արդյոք տնտեսությունը առեարական կամ արհեստագործական ձեռնարկություն, վորը հարկվում է յեկամտային կամ արհեստագործական հարկով:

94. Բոլոր վերոհիշյալ տողերը և սյունյակները լրացնելուց հետո, հարկատուն ՅԻ-ՊԴ տողում ստորագրում է իր տված տեղեկությունների ճշության մասին:

Ծանոթություն. — Տնատիրոջ բացակայության գեղքում, ստորագրում է այն անձնավորությունը, վորը տեղեկություն է տվել ավյալ տնտեսության մասին:

ԳՅՈՒՂՀԱՐԿԻ ՔԱՐՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՑԵՎ ՑԵԶՐԱԿԱՑՈՒՄԸ

95. Քարտերի բոլոր տողերը և սյունյակները լրացնելուց հետո, գյուղաշվառու հանձնաժողովի նախագահը և քարտառվարը գումարում են գյուղհարկի բոլոր տողերի և սյունյակների տվյալները և կազմում են ամբողջ գյուղի համար մեկ քարտ: Ապա համեմատելով այդ տվյալները նախարարաց տարվա հաշվի առնված որյեկտների տվյալների հետ-պարզում են տարբերությունները:

Ցեթե ստացվում է զգալի տարբերություն, վորը չի բացատրվում հարգելի պատճառներով, ապա անպայման պետք է կատարել կրկնակի հաշվառում, կատարելով մասայական փաստացի ստուգումներ և կազմելով արձնագրություն-

ներ այն հարկատուների վրա, վորոնք սխալ տեղեկություններ են տվել: Այդ արձանագրությունները պետք ե ուղարկել գավառային հարկ. հանձնաժողովին մեղավրներին դատի յենթարկելու համար:

96. Այնուհետև կազմվում է արձանագրություն այն մասին, թե հաշվառման ժամանակ քանի՞ արձանագրություն է կազմված յեկամուտի աղբյուրների թագցընդների վրա, քանի՞ փաստացի ստուգում է կատարվել, ի՞նչ յեկամուտի աղբյուրներ և իչքան՝ ավելացել կամ պակասել են անցյալ տարվա հաշվառման տվյալների համեմատությամբ և ավելանալու կամ պակասելու պատճառները: Այդ արձանագրությունը ստորագրում է հաշվառու հանձնաժողովը:

97. Դրանից հետո գյուղական տնտեսությունների հաշվառման տվյալները հայտարարվում է համայնքի ընդհանուր ժողովում, վորը հաստատում է հաշվառումը: Այդ բոլորից հետո գյուղհարկի քարտերին կցվում են բոլոր արձանագրությունները և մյուս ամեն տեսակի փաստաթղթերը (կարմիր բանակայինների վրկայականները և այլն) ամբացվում են գյուղհարկի քարտերի շապիկի մեջ: Շապիկի ներսի մասում գրվում գյուղի տնտեսությունների թիվը և կազմված քարտերի թիվը, ապա ստորագրում է հանձնաժողովի նախագահը և քարտուղարը, և կնքում է գյուղիորհրդի կնիքով:

Այդպիսով գյուղհանձնաժողովը հաստատում է
հաշվառման ճշտությունը:

Այդ ձեռք վերջնականապես կազմված,
ստուգված և կնքված գյուղի հաշվառման բո-
լոր քարտերը և փաստաթղթերը իր շաղիկի
մէջ ամբացված ուղարկվում և գավառակային
հանձնաժողովին:

98. Գավառակային հարկային հանձնաժո-
ղովը ծանոթանալով կցած արձանագրության
հետ և համեմատելով անցյալ և սույն տարվա
տվյալները, վորոշում ե՝ բավարար լինելու
գեղքում հաստատել այդ, հաստատելով նաև
անհամանակառությունների վոչ գյուղատնտե-
սական զբաղմունքներից ստացած յեկամուտի
գումարը: Իսկ յեթե համեմատական տվյալնե-
րից պարզգում ե հաշվառման անբավարարու-
թյունը, անհապաղ վերադարձնում ե ամբողջ
գյուղի քարտերը նոր հաշվառում կատարելու
համար, հարկավոր գեղքերում դատական պա-
տասխանագրության յենթարկելով գյուղհանձ-
նաժողովին:

99. Գավառակային հարկային հանձնաժո-
ղովը բոլոր հաստատած գյուղերի քարտերը
պարբերաբար ուղարկում ե գավառական կենտ-
րոն, տանց սպասելու, վոր հաշվառումը գեր-
ջունա ամբողջ գավառակում:



